

Սույն Ծանուցումը նկարագրում է, թե ինչպես կարող են օգտագործվել և բացահայտվել Ձեր բժշկական տվյալները և ինչպես կարող են դրանք Ձեզ հասանելի լինել: Խնդրում ենք ուշադիր դիտարկել:

Beth Israel Lahey Health (BILH) –ը հարգում է Ձեր անձնական տվյալների գաղտնիությունը: Այս ծանուցումն բացատրում է Ձեր իրավունքները և մեր պարտականությունները Ձեր բժշկական տեղեկատվության վերաբերյալ:

Սույն ծանուցմամբ ներկայացված գործողությունները կիրառելի են BILH-ի խնամքի բոլոր վայրերում: Այդ թվում են մեր հիվանդանոցները, կլինիկաները, և այլ վայրերը թվարկված՝ bilh.org/coveredentities կայքում:

Այս ծանուցումը վերաբերում է BILH բոլոր աշխատողներին, անձնակազմին, մարզիչներին, կամավորներին և այլոց, ով օգնում է Ձեր խնամքի տրամադրմանը:

Այս ծանուցումը նույնպես կիրառելի է բժիշկների նկատմամբ, ով իրականացնում է Ձեր խնամքը BILH խնամքի կենտրոնում: Նրանք կտրամադրեն Ձեզ իրենց առանձին ծանուցումը իրենց մասնավոր գրասենյակում սպասարկելու դեպքում:

Օրենքը պահանջում է, որպեսզի մենք՝

- Գաղտնի պահենք Ձեր առողջության մասին պաշտպանված տվյալները
- Տրամադրենք Ձեզ սույն ծանուցումը մեր իրավական պարտավորությունների և գաղտնիության քաղաքականության մասին,
- Ծանուցենք Ձեզ, Ձեր առողջության պաշտպանված տվյալների խախտման դեպքերի մասին; և
- Հետևենք ներկայումս գործող մեր Գաղտնիության Պահպանման Քաղաքականության պահանջներին:

Սույն ծանուցման ուժի մեջ մտնելու օրը՝
Սույն ծանուցումը ուժի մեջ է մտնում 2026թ-ի փետրվարի 16-ին:

Մեր Գաղտնիության Պահպանման Ծանուցումը հասանելի է հետևյալ լեզուներով՝

Արաբերեն | Հայերեն | Կապերդերեն | Անգլերեն | Ֆրանսերեն | Հունարեն | Գուջարաթի | Հայիթյան Կրեոլերեն | Հինդի | Իտալերեն | Ճապոներեն | Խմերերեն | Կորեերեն | Պորտուգալերեն | Պունջաբի | Ռուսերեն | Պարզեցված

Ձեր Իրավունքները Ձեր Բժշկական Տեղեկատվության վերաբերյալ

Ձեր բժշկական գրանցումների պատճենման կամ դիտման իրավունք

Դուք իրավունք ունեք տեսնելու Ձեր բժշկական կամ վճարման գրանցումները կամ ստանալու դրանց թղթային կամ էլեկտրոնային կրկնօրինակները:

Ձեր հարցումը պետք է ներկայացնեք գրավոր Ձեր BILH-ի խնամքի կենտրոն: Մենք կարող ենք գանձել ողջամիտ վճար պատճենահանման, փոստային կամ այլ նյութերի ծախսերի համար: Մենք կկատարենք Ձեր հարցումը 30 օրվա ընթացքում կամ կտեղեկացնենք Ձեզ, եթե անհրաժեշտ լինի լրացուցիչ ժամանակ: Դուք կարող եք նաև Ձեր փաստաթղթերի հարցումը կատարել Ձեր BILH MyChart անձնական էջի միջոցով:

Որոշ դեպքերում մենք կարող ենք մերժել Ձեր հարցումը: Պատճառը կներկայացնենք գրավոր և կգրենք Ձեր հաջորդ քայլերը:

Գաղտնի Հաղորդակցությունը Կիսելու Իրավունք

Դուք իրավունք ունեք խնդրել մեզ Ձեզ հետ կապ հաստատել բժշկական հարցերով որոշակի եղանակով կամ որոշակի վայրում: Օրինակ՝ կարող եք խնդրել, որ մենք Ձեր փոստարկղ նամակ ուղարկենք կամ գանգահարենք միայն տան հեռախոսահամարին:

Դուք պետք է Ձեր հարցումը ներկայացնեք գրավոր Ձեր BILH-ի խնամքի կենտրոն և ասեք մեզ, թե ինչպես եք ցանկանում, որ Ձեզ հետ կապ հաստատենք: Մենք կհամաձայնենք բոլոր ողջամիտ հարցումներին:

Դուք կարող եք նաև մեզ ասել Ձեր «Հաղորդակցման Նախապատվությունները» Ձեր BILH MyChart անձնական էջում:

Սահմանափակումներ Պահանջելու Իրավունք

Դուք իրավունք ունեք խնդրել մեզ չկիսել կամ «սահմանափակել» Ձեր բժշկական տեղեկատվությամբ կիսվելը BILH-ից դուրս: Մենք պարտավոր չենք ընդունել Ձեր խնդրանքը, սակայն եթե ընդունենք, ապա կհարգենք այն:

Դուք իրավունք ունեք ասելու, որպեսզի մենք չկիսենք Ձեր բժշկական տվյալները Ձեր Բժշկական Ապահովագրողի հետ, եթե Դուք ամբողջությամբ վճարել եք ծառայության կամ բժշկական խնամքի համար Ձեր սեփական միջոցներից: Այս դեպքում մենք պետք է համաձայնենք:

Ձեր Գրանցումը Փոփոխելու Հարցման Իրավունք

Դուք իրավունք ունեք խնդրել մեզ վերանայել Ձեր առողջության կամ վճարման տեղեկատվությունը, որը Ձեր կարծիքով սխալ է կամ թերի: Ձեր հարցումը պետք է ներկայացվի գրավոր BILH խնամքի կենտրոն և պետք է հիմնավորված լինի:

Մենք կպատասխանենք 60 օրվա ընթացքում: Եթե ընդունենք Ձեր հարցումը, ապա կթարմացնենք Ձեր

գրանցումը և կհարցնենք, թե ով պետք է այն ևս ստանա:

Որոշ դեպքերում կարող ենք մերժել Ձեր հարցումը:

Պատճառը կներկայացնենք գրավոր և կգրենք հաջորդ քայլերը:

Տվյալների Տրամադրման Բացատրությունը Պահանջելու Իրավունք

«Հաշվառում»-ը, դա այն դեպքերի ցանկն է երբ մենք տրամադրել ենք Ձեր տեղեկատվությունը BILH-ից դուրս երրորդ կողմերին առանց Ձեզ նախապես ծանուցելու:

Այդ ցանկը չի ներառում՝ բուժման, վճարման կամ առողջական խնամքի գործողությունների վերաբերյալ տրամադրումը, Ձեզ կամ Ձեր թույլատվությամբ տրամադրումը:

Դուք կարող եք հաշվառման հարցումը անել նախորդ վեց տարվա համար: Հարցումը պետք է ներկայացվի գրավոր BILH խնամքի կենտրոն: Մենք կպատասխանենք 60 օրվա ընթացքում: Կարող եք կատարել անվճար հարցում տարին մեկ անգամ:

Բողոքարկելու Իրավունք

Եթե կարծում եք, որ մենք խախտել ենք Ձեր գաղտնիության իրավունքները, Դուք կարող եք բողոքել մեզ կամ դաշնային կառավարությանը:

BILH-ի վերաբերյալ բոլոր բողոքները պետք է ներկայացնեք գրավոր Ձեր BILH Խնամքի գրասենյակ կամ զանգահարեք BILH Integrity & Compliance, որպեսզի օգնեն Ձեզ ներկայացնելու բողոքը՝ (617) 278-8300:

Դուք կարող եք նաև դիմել ԱՄՆ Առողջապահության և Մարդկային Ծառայությունների Նախարարության Քաղաքացիական Իրավունքների Գրասենյակ (U.S. Department of Health and Human Services Office for Civil Rights (OCR))՝ զանգահարելով (877) 696-6775 համարով, առցանց կամ նամակ ուղարկելով՝ Office for Civil Rights, 200 Independence Avenue, S.W., Washington, D.C. 20201 հասցեով:

Դուք չեք ենթարկվի տույժի կամ որևէ հետապնդման բողոքարկելու համար:

Սույն Ծանուցման Թղթային Կրկնօրինակի Իրավունք

Դուք իրավունք ունեք ստանալու սույն ծանուցման թղթային կրկնօրինակը, անգամ եթե համաձայնել եք ստանալ այն էլեկտրոնային եղանակով: Կարող եք խնդրել այն BILH-ի ցանկացած կենտրոնում:

Ինչպես Կարող ենք մենք Օգտագործել կամ Փոխանցել Ձեր Բժշկական Տեղեկատվությունը

Ստորև ներկայացված են այն միջոցները, որոնցով մեզ թույլատրվում է օգտագործել և տրամադրել Ձեր բժշկական տվյալները: Ցուրաքանչյուր դասակարգման համար մենք կներկայացնենք բացատրություն և որոշ օրինակներ: Ներկայացված չեն բոլոր օրինակները, սակայն այն բոլոր եղանակները, որոնց միջոցով մենք օգտագործում կամ տրամադրում ենք Ձեր տվյալները դասակարգված են:

Ձեր Բուժման համար

Մենք կարող ենք օգտագործել Ձեր բժշկական տվյալները Ձեր խնամքը ապահովելու համար: Կարող ենք տրամադրել Ձեր տվյալները բժիշկներին, բուժքույրերին, տեխնիկներին, բժշկական ուսանողներին, որոնք ներառված են Ձեր խնամքում:

Մենք կարող ենք կիսել Ձեր տվյալները Ձեր խնամքի և բարեկեցության մեջ ներառված մարդկանց հետ, օրինակ Ձեր ընտանիքի անդամները, ընկերները, տանը տրամադրող խնամքի ծառայությունները, աջակցող գրասենյակները, հոգևորականներ, կամ բժշկական սարքավորումների մատակարարներ:

Վճարման համար

Մենք կարող ենք օգտագործել Ձեր տեղեկատվությունը, որպեսզի կարողանանք հաշիվ ներկայացնել BILH-ում ստացված Ձեր խնամքի ծառայությունների համար:

Օրինակ, մենք կարող ենք տրամադրել Ձեր տեղեկատվությունը՝ Ձեզանից, ապահովագրական ընկերությունից կամ որևէ երրորդ կողմից վճարում ստանալու համար: Մենք կարող ենք կիսել Ձեր տեղեկատվությունը նախնական համաձայնեցման համար, կամ տեսնելու, թե արդյոք ապահովագրությունը կծածկի հետագա վճարները: Մենք կարող ենք նաև տեղեկատվություն տրամադրել այն անձին ով օգնում է վճարել Ձեր խնամքի համար, օրինակ ինչպես Ձեր երաշխավորողը կամ Ձեր ապահովագրության բաժանորդագրված անձը, եթե դա Դուք չեք:

Մեր Առողջապահական Խնամքի Գործառույթների համար

Մենք կարող ենք օգտագործել և փոխանցել Ձեր տվյալները BILH-ը գործարկելու համար: Դա ներառում է, մեր գործառույթները՝ մեր տրամադրված խնամքի բարելավման, աշխատակազմի և ուսանողների վերապատրաստման կամ հաճախորդներին ծառայություններ մատուցելու ուղղությամբ: Մենք նաև կարող ենք Ձե տեղեկատվությունը փոխանցել երրորդ կողմերին, ում մենք աշխատանքի ենք ընդունում մեզ ծառայությունների և ծրագրերի մատուցման գործընթացներում օգնելու համար:

Ձեզ հետ Կապ Հաստատելու համար

Մենք կարող ենք կապ հաստատել Ձեր խնամքի, բուժման տարբերակների և BILH-ի հետ ունեցած Ձեր փորձի վերաբերյալ: Օրինակ՝

- Այցերի հիշեցումներ: Մենք կարող ենք Ձեզ հետ կապ հաստատել մոտակա այցի մասին հիշեցնելու, կամ այց նշանակելու կամ չեղարկելու համար:
- Բուժման տարբերակներ: Մենք կարող ենք Ձեզ հետ կապ հաստատել՝ հաղորդելու բուժման հնարավոր տարբերակների կամ առողջության վերաբերող օգուտների մասին, որոնցում Դուք կարող եք հետաքրքրվել, կամ տեղեկացնել մեր առողջական պրոդուկտի կամ ծառայության մասին:
- Գոհունակության հարցում: Մենք կարող ենք Ձեզ հետ կապ հաստատել՝ հարցնելու մեր կենտրոններից մեկում կամ մեր մատակարարների հետ ունեցած Ձեր փորձի մասին:

Դրամահավաք

Մենք կարող ենք օգտագործել սահմանափակ տեղեկատվություն Ձեր մասին (ինչպես՝ Ձեր տարիքը, ծառայության ամսաթիվը կամ բաժանմունքը) որպեսզի կապ հաստատենք՝ BILH-ի համար դրամահավաք իրականացնելու նպատակով:

Դուք կարող եք չեղարկել դրամահավաքի մասին կապի հաստատումը՝ դիմելով Ձեր BILH խնամքի կենտրոն:

Հիվանդանոցի Գրանցամատյան

Մինչ Դուք հոսպիտալացված եք BILH-ի հիվանդանոցում, մենք կարող ենք ներառել Ձեր տեղեկատվությունը մեր հիվանդանոցի գրանցամատյանում: Այնտեղ նշվում է Ձե անունը, հիվանդանոցի բաժանմունքը, Ձեր ընդհանուր վիճակը (օրինակ՝ լավ, բավարար, և այլն) և Ձեր կրոնական պատկանելիությունը:

Մենք կարող ենք տեղեկացնել Ձեր վիճակի և բաժանմունքի

մասին, անձանց ով կասի Ձեր անունը: [Notice of Privacy Practices](#)

կիսել հոգնորականի հետ, անգամ եթե նա Ձեր անունը չի ասել:

Եթե չեք ցանկանում գրանցվել հիվանդանոցում, ապա ասեք այ մասին բուժքրոջը կամ Ձեր խնամքի թիմից որևէ մեկին:

Այլ Օգտագործման կամ Բացահայտման դեպքեր, որոնք ունեն Ձեր Գրավոր Թույլտվության Կարիքը:

Մենք Ձեզանից կլինդրենք գրավոր թույլտվություն կամ «լիազորություն» Ձեր բժշկական տեղեկատվության այնպիսի օգտագործումների և բացահայտումների համար, որոնք չեն ընդգրկվում այս ծանուցմամբ կամ մեր նկատմամբ կիրառելի օրենքներով:

Եթե Դուք մեզ թույլատրում եք օգտագործել կամ կիսել Ձեր տվյալները, կարող եք ցանկացած պահի չեղարկել այն: Թույլտվությունը չեղարկելու համար պետք է գրեք Ձեր BILH խնամքի կենտրոնին: Այդ պահից սկսած մենք կդադարեցնենք Ձեր տվյալների օգտագործումը կամ փոխանցումը այն նպատակներով, որոնք նշված են Ձեր թույլտվությունում: Մենք չենք կարող հետ կանչել այն տվյալները, որոնք արդեն կիսել ենք Ձեր թույլտվությամբ, և պարտավոր ենք պահպանել Ձեզ տրամադրված խնամքի մեր գրառումները:

Պետական և ֆեդերալ օրենքները պահանջում են Ձեր գրավոր թույլտվությունը որոշ տեսակի զգայուն առողջական տվյալներ կիսելու համար, օրինակ՝ ՀԻՎ թեստավորման կամ ՀԻՎ թեստի արդյունքների, գենետիկ թեստավորման տվյալների և որոշ տեսակի խորհրդատվական նշումների դեպքում: Կան բացառություններ, օրինակ՝ չարաշահման կամ անուշադրության դեպքերը հաղորդելու համար Ձեր թույլտվությունը չի պահանջվում:

Մենք երբեք չենք կիսի Ձեր տվյալները գովազդային նպատակով, եթե չստանանք Ձեզանից հատուկ թույլտվություն:

Օգտագործման կամ Բացահայտման դեպքեր, որոնք չունեն Ձեր Գրավոր Թույլտվության Կարիքը

Որոշ դեպքերում, երբ օրենքը թույլ է տալիս կամ պահանջում է, մենք կարող ենք կիսել Ձեր տվյալները առանց Ձեր գրավոր թույլտվության: Ստորև ներկայացված են օրինակներ՝

Աղետների ժամանակ օգնություն

Մենք կարող ենք կիսվել Ձեր մասին բժշկական տեղեկություններով այն կազմակերպության հետ, որը աղետի հետևանքների վերացման աշխատանքներում է, որպեսզի Ձեր ընտանիքը տեղեկացված լինի Ձեր վիճակի, գտնվելու վայրի և կարգավիճակի մասին: Մենք կարող ենք նաև հրապարակել ընդհանուր տեղեկություններ, օրինակ՝ «հիվանդանոցը բուժում է վթարի արդյունքում տուժած չորս անձանց»:

Հետազոտություն

Մենք կարող ենք կիսվել Ձեր առողջության մասին տեղեկություններով հետազոտությունների համար, որոնք հաստատվել են BILH հետազոտական հանձնաժողովի կամ նրա նշանակած մարմնի կողմից, երբ դաշնային կամ նահանգային օրենքով գրավոր թույլտվություն պահանջված չէ: Սա կարող է ներառել նաև հետազոտության նախապատրաստումը կամ Ձեզ հետազոտությունների մասին տեղեկացնելը, որոնք կարող են Ձեզ հետաքրքրել:

Օրենքով Պահանջված Դեպքերում

Մենք կարող ենք կիսվել Ձեր բժշկական տեղեկություններով, երբ դա պահանջվում է դաշնային, նահանգային կամ տեղական օրենքներով, օրինակ՝ դատարանի որոշման, վարչական հարցման կամ դատական կանչի պատասխանի շրջանակներում:

Լուրջ Վտանգը Կանխելու համար

Մենք կարող ենք օգտագործել և կիսվել Ձեր բժշկական տվյալներով՝ պաշտպանելու Ձեր առողջությունն ու անվտանգությունը կամ ուրիշներին: Մենք կարող ենք դրանք կիսել միայն այն անձի հետ, ով կարող է օգնել կանխել սպառնացող վնասը:

Օրգանների և Հյուսվածքների Նվիրատվություն

Մենք կարող ենք կիսվել բժշկական տվյալներով այն կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են օրգանների, աչքերի կամ հյուսվածքների նվիրատվությամբ և փոխադատվաստմամբ:

Զինվորներ և Վետերաններ

Մենք կարող ենք կիսվել բժշկական տեղեկություններով, ինչպես պահանջվում է օրենքով, զինված ուժերի կամ օտարերկրյա ռազմական անձնակազմի համար:

Աշխատողների Փոխհատուցում

Մենք կարող ենք կիսվել Ձեր բժշկական տեղեկատվությամբ աշխատողների փոխհատուցման կամ նմանատիպ ծրագրերի համար, որոնք նպաստներ են տրամադրում աշխատանքի հետ կապված վնասվածքների կամ հիվանդությունների դեպքում:

Հանրային Առողջություն

Մենք կարող ենք կիսվել Ձեր բժշկական տեղեկություններով հանրային առողջապահական գործունեության համար: Օրինակ՝ հիվանդությունների կանխարգելման կամ վերահսկման նպատակով, ծնունդների և մահերի, չարաշահման կամ անուշադրության դեպքերի, դեղորայքի նկատմամբ ռեակցիաների կամ արտադրանքի խնդիրների, դեղորայքի հետ կանչերի մասին մարդկանց տեղեկացնելու համար, կամ զգուշացնելու նրանց, ովքեր կարող են հիվանդության ազդեցության ենթարկվել, կամ լինել վարակվելու կամ փոխանցելու վտանգի տակ:

Առողջապահության Հսկողություն

Մենք կարող ենք կիսվել Ձեր բժշկական տեղեկություններով առողջապահության վերահսկողության մարմնի հետ՝ աուդիտների, սերտիֆիկացումների, հետաքննությունների, ստուգումների և լիցենզավորման նման գործունեությունների համար: Այս գործունեությունները անհրաժեշտ են կառավարությանը՝ առողջապահական համակարգը, պետական ծրագրերը և քաղաքացիական իրավունքների օրենքների պահպանությունը վերահսկելու համար:

Իրավապ Մարմիններ

Մենք կարող ենք որոշ դեպքերում Ձեր բժշկական տեղեկությունները փոխանցել իրավապահ մարմիններին, այդ թվում՝ կասկածյալի, փախստականի, վկայի կամ անհետացած անձի հայտնաբերման

նպատակով, հանցավոր արարքին առնչվող հետաքննության համար: Մենք կարող ենք կիսվել Ձեր բժշկական տեղեկություններով վերաբերյալ, BILH-ում հանցավոր գործողությունների վերաբերյալ, արտակարգ իրավիճակներում՝ հանցագործության մասին հաղորդելու համար:

Դիակի Զննիչներ, Բժշկական Փորձագետներ , և Հուղարկավորության Կազմակերպիչներ

Մենք կարող ենք բժշկական տեղեկություններ փոխանցել դիակի զննիչին կամ բժշկական փորձագետին՝ օգնելու նրանց նույնականացնել մահացած անձին կամ պարզել մահվան պատճառը: Մենք կարող ենք նաև բժշկական տեղեկություններ փոխանցել հուղարկավորության կազմակերպիչներին՝ նրանց պարտականությունները կատարելու համար:

Ազգային Անվտանգության և Հետախուզական Գործունեություն

Մենք կարող ենք փոխանցել Ձեր բժշկական տեղեկությունները լիազորված դաշնային պաշտոնյաներին՝ հետախուզության, հակահետախուզության և օրենքով թույլատրված այլ ազգային անվտանգության գործունեությունների համար:

Նախագահի և Այլոց Պաշտպանական Ծառայություններ

Մենք կարող ենք կիսվել բժշկական տեղեկություններով՝ օրենքով թույլատրված դեպքերում, նախագահին, այլ լիազորված անձանց կամ օտարերկրյա պետությունների ղեկավարներին պաշտպանություն ապահովող լիազորված դաշնային պաշտոնյաների հետ կամ իրականացնել հատուկ հետաքննություններ:

Կալանավորներ

Եթե Դուք պատժիչ հիմնարկի կալանավոր եք կամ գտնվում եք իրավապահ մարմինների հսկողության տակ, մենք կարող ենք օրենքով թույլատրված դեպքերում Ձեր մասին բժշկական տեղեկություններ փոխանցել պատժիչ հիմնարկին կամ իրավապահ մարմիններին:

BILH Part 2 Ծրագրերի Գաղտնիության Պահպանման Ծանուցում

Եթե Դուք ստանում եք խնամք մեր թմրամիջոցների օգտագործման խանգարման («SUD») ծրագրերից որևէ մեկում, լրացուցիչ կիրառելի է դաշնային գաղտնիության օրենքը՝ 42 CFR Part 2 («Part 2»), որը վերաբերում է մեր SUD ծրագրերում («Part 2 ծրագրեր») ստեղծվող կամ պահպանվող գրառումներին: BILH-ի Part 2 ծրագրերի ցանկը հասանելի է bilh.org/Part2Programs կայքում, և այս ծանուցման մեջ նշված դեպքերը կիրառելի են ցանկում նշված բոլոր BILH Part 2 ծրագրերի նկատմամբ:

Ձեր բուժման համաձայնությունը թույլ է տալիս մեզ կիսել այս գրառումները բուժման, վճարման և առողջապահական գործառնությունների համար՝ նույն կերպ, ինչպես մենք օգտագործում և կիսում ենք Ձեր տվյալները Առողջապահական ապահովագրության տեղափոխելիության և հաշվետվողականության մասին օրենքի (HIPAA) համաձայն: Երբ մենք կիսում ենք SUD-ի վերաբերյալ տեղեկությունները բուժման, վճարման կամ առողջապահական գործառնությունների համար, ստացողը իրավունք չունի կրկին փոխանցել Ձեր տվյալները, եթե օրենքը հակառակը թույլ չի տալիս:

Ընդհանուր առմամբ, մենք չենք կարող կիսվել Ձեր SUD-տեղեկատվությամբ, բացառությամբ ստորև նշված դեպքերի: Մենք կարող ենք կիսվել տեղեկատվությունը առանց Ձեր թույլտվության, երբ՝

- Բացահայտումը կատարվում է բժշկական անձնակազմին բժշկական արտակարգ իրավիճակում,
- Բացահայտումը կատարվում է որակավորված ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար, որոնք մեր անունից ծառայություններ մատուցելիս գրավոր համաձայնում են պաշտպանել տեղեկատվությունը նույն կերպ, ինչպես մենք պարտավոր ենք պաշտպանել այն,
- Տվյալների բացահայտումը կատարվում է իրավապահ մարմիններին՝ հաղորդելու Ձեր կողմից մեր հաստատությունում կամ մեր անձնակազմի նկատմամբ կատարված կամ կատարելու սպառնալիք պարունակող հանցագործության մասին,
- Տվյալների բացահայտումը կատարվում է երեխաների պաշտպանության գործակալություններին՝ պետական օրենսդրությամբ պահանջվող երեխայի նկատմամբ ենթադրյալ բռնության և անուշադրության մասին հաղորդելու համար,
- Տվյալների բացահայտումը կատարվում է որակավորված անձնակազմի համար՝ էթիկայի հանձնաժողովի հավանությանը և հսկողությանը ենթակա հետազոտությունների նպատակով,
- Տվյալների բացահայտումը կատարվում է առողիտի կամ ծրագրի գնահատման նպատակով որակավորված անձնակազմի համար, որոնք՝ a) գրավոր համաձայնում են պաշտպանել տեղեկատվությունը մեր քաղաքականություններով պահանջվող ձևով, b) ներկայացնում են դաշնային, նահանգային կամ տեղական կառավարական գործակալություններ, որոնք օրենքով լիազորված են հսկելու մեր ծրագիրը, կամ c) ֆինանսական աջակցություն են ցուցաբերում ծրագրին կամ վճարում են առողջապահական ծառայությունների համար:
- Բացահայտումը թույլատրվում է դատարանի որոշմամբ, և այդ որոշումը ներառում է դատական որոշում կամ այլ իրավական պարտադրանք, որը պահանջում է մեզ փոխանցել Ձեր

տվյալները: Այդ դեպքերում Դուք պետք է նաև իմանաք՝

- Ձեր տվյալները կամ Ձեր բժշկական փաստաթղթերի բովանդակությունը ներկայացնող ցուցմունքը Ձեր դեմ որևէ քաղաքացիական, վարչական, քրեական կամ օրենսդրական վարույթում չի օգտագործվի և չի բացահայտվի, եթե այն հիմնված չի հատուկ գրավոր թույլտվության կամ դատարանի որոշման վրա:

- Ձեր տվյալները կօգտագործվեն կամ կհրապարակվեն միայն դատարանի որոշման հիման վրա՝ ծանուցից հետո և Ձեզ կամ փաստաթղթի տիրապետողին կտրամադրվի լաված լինելու հնարավորություն, օրենքով սահմանված դեպքերում։
- Օգտագործման կամ հրապարակման թույլտվություն տվող դատարանի որոշումը պետք է ուղեկցվի դատարանի որոշմամբ կամ այլ նմանօրինակ իրավական փաստաթղթով, որը պարտադրում է հրապարակումը, նախքան փաստաթուղթը օգտագործվի կամ հրապարակվի։

Այլ հանգամանքներում մենք կխնդրենք Ձեր թույլտվությունը՝ Ձեր տվյալները մեր ծրագրից դուրս հրապարակելու համար։ Օրինակ՝ Դուք կարող եք մեզ տրամադրել գրավոր թույլտվություն՝ Ձեր տվյալները Ձեր փաստաբանին ուղարկելու համար։ Եթե Դուք մեզ թույլ եք տվել կիսել Ձեր տվյալները, ցանկացած պահի կարող եք չեղարկել Ձեր համաձայնությունը և գրավոր ծանուցելով խնդրել, որ մենք չփոխանցենք դրանք։ Եթե Դուք փոխեք Ձեր որոշումը, մենք կդադարեցնենք Ձեր տվյալների հետագա փոխանցումը, սակայն չենք կարող կասեցնել արդեն հրապարակված տվյալները։

Դուք դեռևս իրավունք ունեք պահանջելու Ձեր SUD տեղեկատվության բացահայտումների սահմանափակումներ, չեղարկելու Ձեր թույլտվությունը, ստանալու բացահայտումների հաշվառման ցուցակը, ներկայացնելու բողոք, եթե կարծում եք, որ Ձեր գաղտնիության իրավունքները խախտվել են, և ստանալու այս ծանուցման թղթային կամ էլեկտրոնային կրկնօրինակը, ինչպես նշված է այս ծանուցման այլ մասերում։ Բացի այդ, եթե Ձեր տվյալները փոխանցվել են բուժման նպատակով առողջության տեղեկատվության փոխանցման, խնամքի կառավարման կազմակերպության կամ այլ միջնորդի միջոցով, Դուք իրավունք ունեք ստանալու այդ միջնորդի կողմից վերջին 3 տարիների ընթացքում կատարված բացահայտումների ցանկը։ Նման բացահայտումների ցանկի վերաբերյալ Ձեր հարցումը պետք է ներկայացվի գրավոր՝ Ձեր թմրամիջոցների օգտագործման խանգարման 2-րդ մասի ծրագրին։ Նաև Դուք իրավունք ունեք ստանալու Ձեր թույլտվությամբ կատարված բացահայտումների հաշվառումը վերջին 3 տարիների համար։

Ձեզ հնարավորություն կտրվի հրաժարվել դրամահավաքի հաղորդակցություններից նախքան Ձեր տվյալները կօգտագործվեն այդ նպատակներով։

Լրացուցիչ տեղեկատվության համար ծանոթացեք 42 U.S.C. Section 290dd-2 և 42 C.F.R., Part 2 օրենքներին։

Սույն Ծանուցման Փոփոխություններ **Changes to This Notice**

Մենք իրավունք ենք վերապահում փոփոխելու այս ծանուցումը։ Մենք իրավունք ենք վերապահում ուժի մեջ դնելու փոփոխված կամ վերանայված ծանուցումը Ձեր մասին արդեն առկա բժշկական տեղեկատվության, ինչպես նաև ապագայում ստացվող ցանկացած տեղեկատվության համար։ Մենք կհրապարակենք ընթացիկ ծանուցման օրինակ։

Բացի այդ, յուրաքանչյուր անգամ, երբ Դուք գրանցվում կամ ընդունվում եք հիվանդանոց բուժման կամ առողջապահական ծառայությունների համար՝ որպես հոսպիտալացված կամ ամբուլատոր հիվանդ, Ձեր խնդրանքով կտրամադրվի ներկայումս ուժի մեջ գտնվող ծանուցման օրինակ։

Դուք իրավունք ունեք քննարկել այս ծանուցումը և ստանալ Ձեր հարցերի պատասխանները։ Եթե որևէ հարց ունեք սույն ծանուցման մասին, ապա խնդրում ենք կապ հաստատել **Beth Israel Lahey Health**